



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25 նոյեմբերի, 2016 թ.

ք. Երևան

«Կառավարություն - Քաղաքացիական հասարակություն» հակակոռուպցիոն աշխատանքային խմբի ընդլայնված հանդիպում

Թեմա՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացում. հակակոռուպցիոն անկախ մարմնի երկու մոդելների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում»

2016 թվականի նոյեմբերի 23-ին Երևանի «Բեսթ Վեսթերն Կոնգրես» հյուրանոցի Միացյալ հանդիպումների սրահում տեղի ունեցավ «Կառավարություն-Քաղաքացիական հասարակություն» հակակոռուպցիոն աշխատանքային խմբի ընդլայնված հանդիպում՝ «Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացում. հակակոռուպցիոն անկախ մարմնի երկու մոդելների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում» թեմայով: Հանդիպմանը մասնակցեցին ներկայացուցիչներ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունից, ՀՀ Կառավարությունից, այլ պետական մարմիններից, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայից և ՉԼՄ-ներից: Հանդիպումը կազմակերպվել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝ Իրավաբանների հայկական ասոցիացիայի (ԻՀԱ) հետ համատեղ, ՀՀ արդարադատության նախարարության և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի հետ համագործակցությամբ, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից համաֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում:

Հայաստանի իրավաբանների ասոցիացիայի նախագահ և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Չաղոյանը ընդգծեց հետևյալը. «Մենք պետք է եռաչափ մոտեցում ձևավորենք: Մենք գրոյից պետք է ստեղծենք մարմին այն չափանիշների հիման վրա, որոնցով համալսարնային հանրությանը հայտնության է հասել»: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը նշեց. «Այն լինելու է անկախ, ֆինանսապես կայուն մարմին, իրականացնելու է տարբեր գործառնություններ, այդ թվում՝ կանխարգելիչ և կրթական, բացառությամբ իրավապահ գործառնությունների և քաղաքական որոշումների կայացման»:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի միջազգային փորձագետ, աշխատանքային խմբի անդամ Քարո Ուլրիխտսո, խոսելով միջազգային փորձից, նշեց, որ մարմնի համար կարևոր է ոչ միայն անկախ լինելը, այլև ուժեղ տնօրեն ունենալը, բնակչության հետ համագործակցությունը և մարմնի իրավասությունները. «Բազմաթիվ դեպքեր կան, որտեղ մարմինը ստեղծվել է, սակայն շատ քիչ աշխատողներ ունի, չի հասցնում ուսումնասիրել խնդիրները, անբնիհաստ պայքարում է բյուջեի համար»: Ծրագրի ազգային փորձագետ, աշխատանքային խմբի անդամ Մարիամ Չաղոյանը, ներկայացնելով հակակոռուպցիոն մարմնի համար անհրաժեշտ իրավական հիմքերը, նույնպես շեշտեց մարմնի անկախության կարևորությունը: ՀՀ արդարադատության նախարարության փորձագետ Տաթև Սարուխանյանը ներկայացրեց նախարարության կողմից մշակվող կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին նախագիծը: Ըստ նրա՝ այս մարմինը նախատեսվում է ստեղծել Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի մոդելի հիման վրա՝ Էթիկայի հանձնաժողովի իրավասություններն ընդլայնելով կոռուպցիայի դեմ պայքարի կրթական և կանխարգելիչ բաղադրիչներով: ԱՆ հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետ Կարեն Հակոբյանը մանրամասնեց, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը իրավաբանորեն լուծարվելու է:





Միջոցառման արդյունքում ամփոփվեցին կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կատարած աշխատանքները և հանրությանը ներկայացվեցին կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի երկու մոդելների վերաբերյալ առաջարկությունները: Վերջիններս վերոնշյալ ծրագրի շրջանակներում մշակվել են ներկայացվել են ԻՀԱ-ի և ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի փորձագետների կողմից:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում հզորացվել են ՔՀԿ-ների և ՉԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները, որի նպատակով ՀՀ մարզերում 105 ՔՀԿ-ների և ՉԼՄ-ների համար կազմակերպվել են հակակոռուպցիոն դասընթացներ՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով տրամադրվել են փոքր ենթադրամաշնորհներ 20 ՔՀԿ-ների և ՉԼՄ-ների: Ծրագրի շրջանակներում 2014 թ. ստեղծվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ այժմ բաղկացած ավելի քան 80 ՔՀԿ-ներից: Այն առանցքային դեր է խաղում ծրագրի շրջանակներում մշակված ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսության մեջ: Վերջինիս շրջանակներում նշանակալից է Կառավարության և վերոնշյալ կոալիցիայի համատեղ աշխատանքը՝ ապօրինի հարստացման քրեականացման և անկախ ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման շուրջ: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո:

Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Լիանա Դոյդոյանին աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00; հեռ.՝ 091 43 51 36; URL՝ www.foi.am: Կատարող՝ Լիանա Դոյդոյան, էլ. փոստ՝ foi@foi.am:

 <p>Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:</p> <p>Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն Շեռախոս՝ +37410 54 64 94 Շեռապատճեն՝ +37410 54 64 95</p>	 <p>Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է: Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նուս-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակ և ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողակետությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ:</p>	<p>Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն երևանյան գրասենյակ</p> <p>Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից Շեռախոս՝ +374 10 229610 Շեռապատճեն՝ +374 10 229615</p> <p>ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիկինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:</p>	 <p>Իրավաբանների հայկական ասոցիացիա Հասցե՝ Մալաթյանյան 7, ք. 2 Երևան, Հայաստան, 0010</p> <p>Շեռախոս՝ +37410 54 01 99 Շեռապատճեն՝ +37410 58 02 99</p>	 <p>Ինֆորմացիայի ազատության կենտրոն Հասցե՝ Բուզանդի 1/3 Երևան, Հայաստան, 0010</p> <p>Շեռախոս՝ +37410 56 03 60 Շեռապատճեն՝ +37410 56 03 60</p>
--	---	--	---	--